
ՀԱՅ ՖԻՂԱՅԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

ԱՌԱՔԵԼՅԱՆ Կ. Ս.

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում խայտառակ պարտությունից հետո Օսմանյան կայսրության պետականորեն մշակված հայահաված քաղաքականությունն ավելի սաստկացավ: Հայ ազգաբնակչության մի մասը ստիպված լքում էր հայրենիքը, մի մասը համակերպվում էր ստեղծված վիճակի հետ, իսկ մնացած մասն էլ զենքը ձեռքին պայքարի էր ելնում օսմանյան բռնապետության դեմ: Այդ մարդկանցից ձևավորվեցին հայդուկային կամ ֆիդայական խմբեր, և տարերայնորեն ծավալվեց հայդուկային շարժումը: Դա սկսվեց 1880-ականների սկզբներին և հաջողություններով ու ձախողումներով տևեց մինչև 1907թ.: Այդ տարերային շարժման ներսում ձևավորվեցին երկու ուղղություններ: Ինչպես նշել է Կ. Սասունին, *«Ճակատագրական օրերուն, ազատագրական յեղափոխութիւնը, կ'ընթանար երկու որոշ հոսանքներով: Ֆետայական գործունէութիւնը, որ կ'արտայայտուէր խումբերու շարժումներով եւ կը գունաւորուէր արիւնայի դէպքերով, եւ միւս հոսանքը, որ կ'ընթանար խոհեմութեամբ, աստիճանական զինումի ամէնօրեայ աշխատանքով եւ կը ճգնէր հաւաքական ու ծաւալուն մեծ ուժ մը դառնալ»*¹: Այդ իրողությունը էական գործոն է եղել շարժման ամբողջ ընթացքի համար՝ իր ազդեցությունը թողնելով հայդուկային պայքարի վրա: Դա բացատրվում է նրանով, որ շարժման ճանաչված և հայտնի շատ գործիչներ շարժման ռազմավարության հարցում դավանում էին միմյանց հակադիր երկու սկզբունքների: Հարկ է նշել, որ այդ երկու ուղղությունները ազատագրական պայքարի սկզբնական (1880-ական թվականների երկրորդ կես) շրջանում շատ թույլ էին արտահայտվում և որոշակիորեն դրսևորվեցին 1890-ական թվականների սկզբներից:

Առաջին ուղղության կողմնակիցները համոզված էին, որ օսմանյան բռնապետության նկատմամբ հաղթանակի կարելի է հասնել միայն հանգամանորեն նախապատրաստված համաժողովրդական զինված ապրստամբության միջոցով: Այս ուղղությունն ավելի հստակեցվեց Հրայրի (Արմենակ Ղազարյան) կողմից: Կ. Սասունին նշում է, որ *«1890-ին, հայկական պոռթկումները երկու հատկանշական կողմերով կը ներկայանան... Առաջին, ցուցական հանգամանք ունեցող շարժումներ, որոնք մեծ աղմուկ հանեցին, ինչպես Պոլսոյ և Էրզրումի ցույցերը և Կուկունեանի արշավանքը: Երկրորդ, գիւղական ըմբոստութիւնները իրենց անմիջական տիրոջներու հանդէպ, ինչպէս Վարդենիսի, Ղարաչորանի, Ղըզըլաղաճի, Պէրմի դիմադրութիւնները, որոնք գիւղական հլու*

¹ Սասունի Կ., Սարերու Ասլանը (Գեորգ Չաուշի կենսագրավէպը), Պէրյութ, 1966, էջ 277:

զանգուածներու հաւաքական պոռթկումն էր բռնակալներու եւ կեղեքողներու դեմ: Հրայրը սկզբէն-1886-1890-այս երկրորդ տեսակի շարժման մասնակցեցաւ եւ հաւատաց երկրի բնիկ ժողովուրդի հաւաքական ուժին»²: Հրայրն ու իր կողմնակիցները գտնուում էին, որ «ժողովուրդն է միակ հիմքը ժողովրդական լայն շարժման մը, որուն համար ան պետք է լրջորեն պատրաստուի...»³: Թեւ Հրայրն իր ամբողջ եւթայամ ֆիդայի էր, այնուհանդերձ, ընդհանուր առմամբ դեմ էր ֆիդայական, ցուցարարական քայլերին ու խմբակային կոնիվներին՝ դրանք համարելով վնասաբեր և անժամանակ: Մտային մեծ կարողությունների ու խոր համոզմունքների տեր Հրայրը, դերվիշի շորեր հագած, շրջում էր գյուղեգյուղ և քարոզում հեղափոխական գաղափարներ. «Եւ այսպէս կառավարութեան քթին տակ, Արմենակ կը շրջի ազատ ու համարձակ եւ աննշմարելի կերպով կը ստեղծէ խոշոր կազմակերպութիւն մը»⁴: Փաստորեն, Հրայրն առաջինն էր, որը, առաջ քաշելով ընդհանուր ապստամբության գաղափարը, հակադրվեց ցաք ու ցրիվ խմբային կոնիվներին: Նա գտնուում էր, որ համաժողովրդական ապստամբության հաղթանակն ապահովելու համար պետք է նախապատրաստվել երկարատև ու մանրակրկիտ՝ շարժման մեջ ներգրավելով արևմտահայ բոլոր խավերին, ֆիդայական խմբերին ու քաղաքական կուսակցություններին: «Հրայր,- նշում է Մասունին,- համաձայն չէր անխորհուրդ շարժումներուն եւ յուսահատ արարքներուն: Ու երբ ուրուականի պէս տեղէ տեղ կը հանդիպէր յեղափոխական կեղորոններուն, շրջուն ֆէտայիներուն կ'ըսէր.- Գաղտնի եւ անշշուկ պատրաստութիւններու ժամանակն է: Զէնքի մթերքը աւելցուցէք: Ընդհարումներէ խուսափեցէք որքան կարելի է, որպէսզի ժողովուրդին մէջ ստեղծած մեր բնական մարմինները կարենան գործ տեսնել եւ օր մը ապստամբական շարժում սկսիլ վճռական հարուածներով»⁵: Նա մատնանշում էր, որ դրված խնդիրը համազգային է, և պետք է ազգովի միաբանվել՝ հաղթանակի համար: Նաև ավելացնում էր, որ շարժման հաջողության համար հայկական բոլոր գավառներում պետք է նախապատրաստական աշխատանքներ կատարվեն, և բոլոր ուժերը պայքարի դուրս գան միաժամանակ⁶: Իրագործելով դաշնակցության որոշումները՝ Հրայրը տարբեր գավառներում գաղտնի հիմնում էր կոմիտեներ, հավաքագրում անդամներ՝ գտնելով, որ բոլոր ֆիդայիները, անգամ հայդուկապետերը, պետք է ենթարկվեն այդ կոմիտեներին ու նրանց որոշումներին:

Լինելով դաշնակցական և կրելով ժողովրդի ցավերը՝ Հրայրը դարձավ ժողովրդի արդար պաշտպանը: Նա իր կյանքը նվիրեց ժողովրդի արդար դատին և ոչ թէ այս կամ այն կուսակցության եսական փառքին: Ավելին, Հրայրը դաշնակ-

² Մասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մեջ, Պէրոյթ, 1964, էջ 9:

³ Ռուբեն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հ. 3, Թեհրան 1982, էջ 199:

⁴ Նույն տեղում, էջ 200:

⁵ Մասունի Կ., նշվ. աշխ., էջ 293:

⁶ Միմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, գիրք Ա, Ե., 1996, էջ 97:

ցությանը, հնչակյաններին ու արմենականներին խիստ քննադատում էր նեղ կուսակցական և միջկուսակցական հակամարտությունների, անձնական եսը գերադասելու համար՝ շեշտելով, որ չկա գաղափարի տարբերություն, և որ դրանք փոխանակ օրհասական պահին ի մի բերեն և համախմբեն ժողովրդի ուժերը՝ զբաղվում են անձնական, նեղ կուսակցական մանր խնդիրներով ու հաշիվներով, ինչը վնասում է ազգի ընդհանուր գործին. *«Ի՞նչ ունիք, ի՞նչ... Որն է այն գաղափարը, որ ձեզի միմյանց կը ջոկէ. ինչ կետի վրա է ձեր հասկացողությունների մեջ եղած տարբերությունը, որ դուք ձեր ողորմելի ուժերը միացնելու տեղ կը ջլատեք, և ձեր պաշտպանութեան յանձնուած թշուառ ժողովուրդի տունը հիմնայատակ կը տապալէք... Անո՛թ է, յանցաւնք է ...»*⁷, - գրում էր Հրայրը «Հնչակին» և «Դրոշակին» ուղղված իր 1895 թ. մայիսի 2-ի հայտարարության մեջ: Մյուս խնդիրը, որին նա մեծ կարեւորություն էր տալիս՝ հայ ժողովրդին զինելն էր: Նրա համոզմամբ՝ այդ խնդրի լուծումը պետք է ստանձնեն հայ ազգային կուսակցություններն ու քաղաքական ուժերը, բայց միաժամանակ նշում էր, որ այդ ուղղությամբ պետք է գործի ամբողջ հայ ազգը: Ըստ նրա՝ պետք է ձեռք բերվեն համապատասխան ֆինանսական միջոցներ, որոնց միջոցով հնարավոր կլինի ձեռք բերել հնարավորինս շատ զենք ու զինամթերք և ներմուծել Երկիր: Ուստի Հրայրը կարևորում էր, որ ամեն հայ առաջին հերթին ինքը իր համար զենք հայթայթի և պատրաստ լինի սահազանգի դեպքում զինված ելնել պայքարի: Հրայրն այն կարծիքին էր, որ հայերը թուրքական հզոր բռնակալական մեքենայի դեմ պայքարում միայնակ չեն կարող հաջողության հասնել: Ուստի նա առաջարկում էր գտնել օսմանահպատակ տարբեր ազգերի հետ մերձեցման ուղիներ, դաշինք կնքել և միասին դուրս գալ ազատության համար պայքարի: Նա մասնավորապես առաջարկում էր բանակցել քրդերի հետ, քանի որ վերջին հաշվով նրանք էլ էին ենթարկվում գրեթե նույն բռնություններին, ինչ հայերը: Կ. Սասունին գրում է, որ Հրայրը *«ջերմ կողմնակից մըն էր հայ-քրդական բարեկամութեան եւ այդ ուղղութեամբ բաւական ջանքեր թափած էր»*⁸: Մակայն չնայած համառ ջանքերին՝ նա լուրջ հաջողության չհասավ հայ-քրդական ընդհանուր ճակատ կազմելու գործում: Բանն այն է, որ քրդական վերնախավի ներկայացուցիչներն ավելի շատ հավատարիմ էին թուրքական իշխանություններին և ավելի քիչ էին հակված քուրդ-հայկական դաշինք ստեղծելուն կամ ընդհանրապես դեմ էին դրան: Բանն այն է, որ եթե մինչև 1870-ական թվականները թուրքական իշխանությունները հալածում և փորձում էին ոչնչացնել քրդական աշիրեթներին, քանի որ նրանցից վտանգ էր սպառնում, ապա դրանից հետո դրությունն արմատապես սկսեց փոխվել: Օսմանյան իշխանություններն այլևս չէին հալածում քրդերին, և այժմ արդեն հայերին դիտելով որպես նոր վտանգավոր տարր՝ սկսեցին սիրաշահել քրդական վերնախավին՝ քրդերին հայերի դեմ լարելու և վերջիններիս ձեռքով

⁷ Դրոշակ, 1930, N 11-12, էջ 279, («Հնչակը» հրաժարվեց տպել այդ հայտարարությունը):

⁸ Սասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մեջ, էջ 42:

ճնշելու նպատակով: Նրանցից հզորներին ու առավել հայատյացներին բարձր պաշտոններ տրվեցին, իսկ շատերը պարզևեր ու շքանշաններ ստացան անձամբ սուլթանից: Բացի այդ, որոշ ժամանակ անց՝ 1890-ական թվականների սկզբին, Աբդուլ Համիդ II-ը քրդերից կազմեց իր դաժան «համիդիե» ջոկատները: Քրդերը, Բարձր դռնից ստանալով հայերին թալանելու և նրանց հաշվին հողեր ձեռք բերելու, հարկեր հավաքելու իրավունք ու երաշխիքներ, բնական է, որ չէին հրաժարվի դրանցից և հայերի հետ հակասուլթանական դաշինք չէին ստեղծի: Հետևաբար, այդ ուղղությամբ հայ ազատագրական շարժման մեր գործիչների բոլոր ձեռնարկումներն ի սկզբանե դատապարտված էին անհաջողության, ինչպես և եղավ: Հրայրը եկավ նաև այն համոզման, որ եվրոպական երկրների օգնության հետ կապված սպասումները ևս անպտուղ են. «Մենք այլևս ոչ Եւրոպայի խաբուսիկ յոյսերէն եւ ոչ թիւրքի խորամանկութիւններէն կը խաբուինք: Մենք գիտենք մեր ճանապարհը...»⁹, - գրում էր Հրայրը: 1898 թ. կորցնելով իր լավագույն զինակիցներից ու համախոհներից մեկին՝ Վազգենին, իսկ 1899 թ.՝ նաև Գուրգենին, որոնք հայ ազատագրական շարժման ականավոր գործիչներից էին, Հրայրը հայտնվեց ծանր կացության մեջ: Այդ ժամանակ լուրջ տարակարծություն էր առաջանում Հրայրի և Անդրանիկի միջև: Եթե, ինչպես նշեցինք, Հրայրը պաշտպանում էր ժողովրդական զանգվածային և համընդհանուր պայքարի գաղափարը, ապա Անդրանիկը կողմնակից էր ազատագրական շարժումը խմբային, ֆիդայական կոնվներով վարելուն: Դա վկայում է Ռուբենը՝ ասելով, որ «Մինչ Արմենակ ժողովրդական լայն կազմակերպուած յեղափոխութեան կը հաւատար, Անդրանիկը ընդհակառակն..իր ամբողջ յոյսը կը կապեր ընտրեալ ֆետայիներու յեղափոխական գործունէութեան հետ»¹⁰: Անդրանիկը և իր համախոհները՝ Գևորգ Չաուշը, Սեբաստացի Մուրադը, Մպաղանաց Մակարը, Ադրբուր Սերոբը, Գալեն, Չոլուն և ուրիշ ֆիդայիներ, հակառակվելով Հրայրի տեսակետներին, պնդում էին, որ Արևմտյան Հայաստանում անհնար է համընդհանուր ժողովրդական ապստամբություն կազմակերպելը: Ըստ նրանց՝ ֆիդայիները, հենվելով ժողովրդի լայն աջակցության վրա, միայն տեղական կոնվներ վարելով, կարող են արևմտահայությանն ազատագրել բռնակալությունից: Անդրանիկը թեև խտրություն չէր դնում ազգերի միջև, սակայն կտրականապես դեմ էր Թուրքիայի մուսուլմանների հետ ցանկացած դաշինքին՝ դա համարելով անօգուտ ու պարապ զբաղմունք: Ռուբենի վկայությամբ. «մինչ Արմենակ, բաւարար չհամարելով հայ ժողովրդական կազմակերպութիւնները, որոշ յոյսեր դրած էր նաև հարեւան ցեղերու՝ քիւրտերու եւ թուրքերու յեղափոխական շարժման վրայ, ու այդ ուղղութեամբ ալ աշխատանքը կը թափեր, Անդրանիկը ընդհակառակն, ոչ մէկ

⁹ Նույն տեղում, էջ 29:

¹⁰ Ռուբեն, նշվ. աշխ., էջ 208:

օգուտ կը տեսներ իսլամներու յեղափոխութեան մէջ եւ ինկնություն կը համարէր անոնց վստահիլ ու անոնց շնորհիւ փճացնել յեղափոխական գործը»¹¹:

Նկատենք, որ մինչև Հրայրը, Մկրտիչ Խրիմյանը, Ներսես Վարժապետյանը և Հակոբ Սարկավազը այդ ուղղությամբ որոշ գործնական քայլեր էին ձեռնարկել: Հակոբ Սարկավազը «լավագոյն յարաբերություններ մշակել էր քիւրտներուն հետ»¹²: Նա գաղտնի գործունեություն էր ծավալում Մուշում, ապա դաշտի գյուղերում և քարոզում էր հայ և քուրդ ազգերի համերաշխության եւ համագործակցության գաղափարը¹³: Պակաս աշխատանք չի կատարել Վարդան վարդապետը, որը Հրայրից 8-10 տարի առաջ մեծ ճիգեր էր թափել այդ ուղղությամբ¹⁴: Շատերին նա սիրաշահում էր կաշառքով, ոմանց խոսքերով, ոմանց նկատմամբ էլ կիրառում էր այլ հնարներ: Ահա թե ինչպես է Կ. Սասունին ներկայացնում Վարդան վարդապետի գործունեությունը քրդերի շրջանում. «երբ կ'անցնէր քրդական շրջանները, հաշտության բանբերը կը հանդիսանար, նուէրներ կը բաշխէր աղաներէն ոմանց, անոնց կացութիւնը կուտումնասիրէր, մեծ զգուշութեամբ անոնց կը զգացնէր թրքական խարդախ քաղաքականութիւնը, վերադարձին, իր վաւերական տեղեկութիւնները կը հաղորդէր Հրայրին, իշխան Գրգոյին եւ Մշոյ առաջնորդարանին»¹⁵: Վարդան վարդապետի ուղեկցությամբ տարբեր ցեղապետերի հետ հանդիպումներ է ունենում նաև Հրայրը: Թեև երկար չարչարանքներից հետո նրանք քիչ հաջողության հասան, այնուամենայնիվ, Հրայրը չէր հիասթափվում ու հույսը չէր կտրում գործի հաջողությունից: Նա նույնիսկ երբեմն արգելում էր անհաբեկել հայ գյուղացիների համար պատուհաս դարձած քուրդ ցեղապետերին՝ մտածելով, որ դա կվնասէր հայ-քրդական հարաբերություններին ու ընդհանուր գործին: Երկար ժամանակ դաշնակցությունը տարբեր մարդկանց միջոցով քրդերի վրա ազդելու զանազան ուղիներ էր փնտրում: 1896 թ. Դերսիմ ուղարկվեց Ռուբեն Շիշմանյանը՝ Դերսիմի Քեռին, որը կյանքով հատուցեց քրդերի շրջանում ծավալած քարոզչության համար. «երկու-երեք տարի մղեց այնտեղ իր քարոզչութիւնը քիւրտերու մէջ, ձերբակալուեցաւ թուրքերու ձեռքով, կախադանով պսակեց իր դժուարին առաքելութիւնը: Այդ ձեռնարկն էւս՝ ամենէն նպաստաւոր սեպւած, քրդական գետնին վրա արդիւնք մը չտուաւ»¹⁶, - նշում է Մ. Վարանդյանը: Քրդերի շրջանում մեծ հեղինակություն են վայելել նաև Գևորգ Չաուշն ու Ռուբենը, բայց նրանց քայլերը սովորական շփումներից այն կողմ չանցան: Երբեմն լավ հարաբերություն էր հաստատվում այս կամ այն ցեղի ու ցեղապետի օրինակ Ղասըմ բեյի, որը հայտնի ոճրագործ Մուսա բեյի եղբայրն էր, Դմիլկ աշիրեթի պետ

¹¹ Նույն տեղում, էջ 208:

¹² Դրոշակ, 1930, N 11-12, էջ 302, տե՛ս նաև *Армянский вопрос, Е., 1991, с. 17.*

¹³ **Կոստանդյան Է.**, Հայրուկային շարժում. նախաքայլեր (Սսպար, 1993, N 1, էջ 5):

¹⁴ **Ռուբեն**, նշվ. աշխ., հ. 3, էջ 247:

¹⁵ Հայրենիք, 1954, N 1, էջ 38:

¹⁶ **Վարանդեան Մ.**, ՀՅԴ պատմություն, Ե., 1992, էջ 211 - 212:

Ջեյնալի և այլոց հետ, սակայն դրանք ժամանակավոր էին և մասնակի բնույթ էին կրում: Թեև հետագայում այդ ուղղությամբ զգալի ջանքեր գործադրեցին Իշխանը, Արամը, Վ.Փափագյանը, Մալխասը, Վռամյանը, Փիլիկը և այլք, սակայն արդյունքները փոքր էին: Իսկ Անդրանիկը ժամանակին ասում էր, որ քրդությունը չի կարող դավաճանել սուլթանին և անցնել հայերի կողմը, քանի որ *«Քիւրտը իր ազատութիւնը ձեռք բերած է լիովին. ոչ զօրք կուտայ, ոչ տուրք կուտայ, ոչ կը հալածուի, ոչ ալ պատիւ կը բռնաբարուի»*¹⁷: Անդրանիկն այն համոզմունքին էր, որ քրդերի մեջ էլ կան մարդիկ, որոնք գիտակցում են կառավարության կատարած զազանությունները, բայց նրանք քիչ են, և եթե հայերին բարություն են անում, ապա վախով և զգուշությամբ: Այնտեղ, որտեղ մենք ուժ ենք կազմում, նշում էր Անդրանիկը, քրդերը բարեկամանում են մեզ հետ, բայց երբ կառավարությունը հրաման է տալիս հարվածել հայերին, առաջինը դա անում է բարեկամ աշիրեթը: Նա քրդերի հետ վարվեցողության մասին մի քանի կետեր էր մշակել, ուր ասվում էր. *«Քիւրտ անհատներու հետ բարեկամութիւն և յարաբերութիւն ունեցիր, բայց չըլլայ որ վստահիս անոնց, միշտ զգոյշ եղիր ... կը պատահի որ քիւրտերը կը հիւրասիրեն քեզ հաւատք չընծայես»*¹⁸:

Անդրանիկը և Հրայրը, մարտավարական խնդիրների շուրջ միմյանց հակառակվելով, տարբեր տեսակետներ ունեին նաև ֆիդայիների կենսապայմաններին և ապրելակերպին առնչվող հարցերում: Եթե Հրայրը գտնում էր, որ հայդուկը պետք է չարքաշ կյանքով ապրի, ապա Անդրանիկը պնդում էր, որ *«հայ մարտիկը, որ այսօր կա, վաղը՝ չկա, պիտի հագնված լինի շատ լավ, կոկիկ ու գեղեցիկ, իշխանի նման, իր հագուստ-կապուստով ու դիրքով պիտի ազդի ոչ միայն հայի, այլև նրա թշնամիների վրա, որպեսզի ոչ ոք չհանդգնի կարծել թե ֆիդայիները ողորմություն խնդրող խեղճ մարդիկ են»*¹⁹: Անդրանիկը գտնում էր, որ ֆիդային պետք է լինի կուշտ և առողջ, որպեսզի *«կռուի ժամանակ լոյս ունենայ իր աչքերուն մէջ, ուժ ունենայ իր ոտքերուն մէջ՝ տոկալու և քաջաբար կռուելու համար»*²⁰: Նա առարկում էր հակառակ թևի նաև այն պնդմանը, որ ֆիդայիները պետք է ենթարկվեն դաշնակցության կոմիտեներին, ասելով, որ *«իրենց տուներուն մէջ նստած կոմիտեները չեն կրնար ղեկավարել լեռներու մէջ թափառող ֆետայիները»*²¹: Այս և նման մի շարք հարցերի շուրջ էին երկու ուղղությունների և նրանց ղեկավարների տարաձայնությունները, որոնք թեև թշնամության չէին հասնում, բայց և դրանից հեռու չէին: Այսպես, երբ 1901 թ. Անդրանիկը մի քանի անգամ Հրայրից պահանջեց բարձրանալ լեռները, վերջինս հրաժարվեց հայտարարելով, որ *«եթէ ինքը լեռ բարձրանայ, պիտի դառնայ պարզ ֆիտայի մը,*

¹⁷ **Անդրանիկ**, Մարտական հրահանգներ, Ժընեվ, 1906, էջ 74:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ **Միսոնյան Հ.**, նշվ. աշխ., հ. Ա, էջ 104:

²⁰ **Ռուբէն**, նշվ. աշխ., հ. 3, էջ 209:

²¹ Նույն տեղում, էջ 209:

մինչդեռ յեղափոխական գործը կը պահանջէր լայն աշխատանք տանիլ ժողովրդական զանգուածներուն մէջ, ինչ որ ինքը կրնար կատարել, երբ փախստական չէր...»²²: Ինչպէս տեսնում ենք, հայ ազատագրական շարժման երկու հեղինակավոր գործիչների հակասության հիմքում ընկած էր ոչ թե անձնականը, այլ պայքարի մարտավարության նկատմամբ մոտեցումների տարբերությունը: Շարժման երկու թևերը թեն հակադրված էին միմյանց, բայց, բարեբախտաբար, դա անհամաձայնություն էր և ոչ թե թշնամանք: Կարծում ենք, որ երկուսն էլ անհրաժեշտ էին և լրացնում էին մեկը մյուսին: Հետևաբար իրավացի էր Ա. Համբարյանը, ըստ որի՝ «խմբակային կոիվները միշտ վառ էին պահում ազատագրական պայքարի ոգին և զսպում էին պաշտոնյաների ու աղաների հայերի հանդէպ գործադրվող բռնություններն ու կեղեքումները, իսկ զանգվածներին նախապատրաստումը ազատագրական պայքարին կտար կազմակերպված բնույթ»²³:

Ծփստելով ազատագրության մարտավարական խնդիրների հետ կապված Հրայրի տեսակետները և գաղափարները՝ հակված ենք նրան, որ Արևմտյան Հայաստանում դեռևս չկային այն պատմական ու քաղաքական պայմանները, որոնք Հրայրին և այդ ուղղության հետևորդներին թույլ կտային նախապատրաստել համընդհանուր ապստամբություն: Լրտեսների ու մատնիչների առկայության և պետական զանազան պաշտոնյաների աչալուրջ հսկողության պայմաններում անհնար էր զինել ժողովրդին և աննկատ մնալ կամ սպասել, որ օսմանյան լծի տակ հեծող մյուս հարևան ժողովուրդները և առաջին հերթին քրդերը հասնեն քաղաքական հասունության այնպիսի աստիճանի, որ դաշնակցեն հայերի հետ և կովի դուրս գան օսմանյան բռնապետության դեմ: Տվյալ աշխարհաքաղաքական իրավիճակում թերևս իրական ճանապարհն Անդրանիկի մատնանշած ուղին էր: Ճիշտ է, այն ևս արդյունավետ լինել չէր կարող, սակայն այլ էլք չկար, քանի որ հապաղումը մահվան էր հավասար: Ավելին, անկախ գործելակերպից, միևնույն է, կոտորածները, արտաքսումը, ուժացումն ու բնաջնջումն ի կատար էին ածվելու: Դա արդեն մշակված պետական քաղաքականություն էր և պետք է կենսագործվեր: Ավելի ճիշտ էր վեհանձն կերպով զոհվել ազատագրության համար մղվող պայքարում, քան ոչնչանալ առանց դիմադրելու:

²² Մասունի Կ., Հրայրի դերը հայ ազատագրական շարժման մեջ, էջ 35:

²³ Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում 1898-1908 թթ., Ե., 1999, էջ 189:

ИЗ ИСТОРИИ АРМЯНСКОГО ФИДАИНСКОГО ДВИЖЕНИЯ

АРАКЕЛЯН К. М.

Резюме

Во второй половине 1880-ых годов в результате ужесточения турецкого гнета в Западной Армении началось стихийное народное движение, известное под названием гайдуцкого или фидаинского. Идеи Хримяна Айрика и его пламенные призывы воодушевляли молодежь, вдохновляя ее на борьбу.

В самом движении фидаинов формируются два крыла, отличающихся друг от друга методами идейной и тактической борьбы. Сторонники первого направления считали, что прежде всего необходимо вооружиться, подготовить народ к всеобщему восстанию. Выдающимися представителями этого направления были большой патриот и лидер гайдуков Грайр Джохк-Арменак Казарян и его единомышленники: Вазген Тероян, Гурген, Гегам Тер-Карапетян, архимандрит Вардан.

Второе крыло возглавляли Андраник, Никол Думан, Геворк Чавуш, Спагананц Макар и другие. Это крыло придерживалось тактики стремительного, неожиданного удара. Данную точку зрения поддерживали Андраник, Геворк Чавуш, Ахбюр Сероб, Себастици Мурад, Гале и многие другие. Однако, несмотря на различие подходов и тактики, армянское гайдуцкое движение являло собой единое целое.